

Արթուր Սիմոնյան

Ե Կ Ե Ք Ի Ն Չ . . .

Արթուր Սիմոնյան  
2003

# ՄԵՐ ՀԵՂՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՍՏԾՈՒ ՄԵՁ

Ա ա խ ա ք ա ն ի      փ ո խ ա ռ ե ն

Շատ քրիստոնյաներ այսօր հիվանդ են, աղքատ և պարտված կյանքի շատ բնագավառներում պարտված, թեև Հիսուսը 2000 տարի առաջ Գողգոթայի խաչի վրա վճարեց, որպեսզի մենք լինենք երջանիկ, առողջ և, ամենակարևորը, հաղթող: Երբ նայում ենք Ավետարանին, տեսնում ենք, որ այսօր այդ հաղթանակը պատկանում է մեզ՝ քրիստոնյաներիս: Եսայի մարգարեության 53-րդ գլխում ասվում է, որ Հիսուսն արդեն մեր փոխարեն արյուն է թափել, չարչարվել է ու տանջվել, և մենք Նրա վերքերով բժշկվել ենք, մեր խաղաղության համար Նա գին է վճարել: Աստված ուզում է, որ մենք բարգավաճենք ֆինանսապես, որ տարածենք Ավետարանը՝ անկողնում հիվանդ պառկելու փոխարեն, չապրենք պարտքերի մեջ՝ մեզ վրա վերցնելով կյանքի դժվարությունները:

Հիսուսը մեռելներից հարություն է առել, Նա կենդանի է ու բնակվում է մեզ հետ: Այսօր ժամանակն է, որ մենք արթնանանք քնից, և Հիսուսը մեզ կլուսավորի: Աստծո խոսքն ասում է.

**«Իմ ժողովուրդը բնաջինջ եղավ գիտություն չունենալու պատճառով» (Ովսե 4.6):**  
Աստված չի ուզում, որ մենք բնաջինջ լինենք, Նա ցանկանում է մեզ օրհնված տեսնել: **3**

Այդ իսկ պատճառով Նա ուղարկել է Իր Խոսքը և Սուրբ Հոգին, որպեսզի մենք Նրանից ամեն բան սովորենք:

Աստված իմ սրտում մի պարզ գիրք գրելու ցանկություն է դրել, որը կարող է հասկանալ անգամ առաջին դասարանցին:

Ճիշտն ասած, բարդ գիրք գրել չգիտեմ էլ: Եվ փառք Աստծուն դրա համար, որովհետև Հիսուսը նույնպես խոսում էր շատ հասարակ:

Ե Կ Ե Ք Ի Ե Չ Մ Ո Տ



գլուխ 1

Մատթ. 11.28-30-ում գրված է. «Ինձ մոտ եկեք, ամեն հոգնածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: Ձեր վրա առեք իմ լուծը և Ինձնից սովորեք, որովհետև ես հեղեմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև»: Այս խոսքերում մենք երեք պատվիրան ենք տեսնում: Առաջին պատվիրանն է. «Ինձ մոտ եկեք»: Հիսուսն այսօր կանչում է: Ես այդ կանչն առաջին անգամ լսել եմ, երբ դեռ Աստծուն չէի ճանաչում և աշխարհիկ կյանքով էի ապրում: Ես ապահովված էի ֆինանսապես ու շատ առողջ էի, բայց հոգնել էի կյանքից և միշտ մտածում էի. «Ինչո՞ւ եմ ծնվել, մի՞թե ծնվել եմ մեռնելու համար»: Եվ այդ մտքերից սարսափը պատում էր ինձ: Շատ անգամ պատկերացնում էի, որ մահանում եմ, իմ հուղարկավորությունն էի տեսնում: Հավատացեք, այդ ամենը շատ ահավոր է ու դժվար: Երբ քեզ մշտապես նման մտքեր են հետապնդում, նշանակում է՝ մահն է քեզ կանչում և ասում. «Եկ ինձ մոտ»:

Եվ ես ամեն ժամանակ մահն էի տեսնում: Մի անգամ, երբ ընկերներիս հետ հարբեցողությամբ էի զբաղված (այդ ժամանակ ես ապրում և աշխատում էի

**6** Ռուսաստանում), նրանք սկսեցին իրար հետ վիճել մի երիտասարդ, անառակ աղջկա

պատճառով, և ընկերներիցս մեկը դանակահարեց մյուսին: Նրա աղիքները դուրս թափվեցին: Ես շատ ծանր ապրումներ ունեցա, կյանքը իմաստագրկվեց: Ես տեսա, որ ամեն բան, նույնիսկ ընկերությունը, սուտ է, և ոչ մի ճշմարտություն չկա: Ես հոգնել էի կյանքից: Թեպետ ֆիզիկապես հոգնած չէի, բայց հոգնել էի հոգեպես: Հոգնել էի ստից, կյանքի ունայնությունից, դավաճան ընկերներից:

Կորցրել էի կյանքի իմաստը, ինձ այլևս ոչինչ չէր կարող օգնել, շատ անգամ ես հարբում էի, որպեսզի մոռանամ կյանքի ունայնությունը: Հավատացեք, ոչ մի բան ինձ չէր օգնում:

Մի օր, երբ ես Երևանում էի, եղբայրս ինձ հրավիրեց հավատացյալների մի հավաքույթի: Դա կոմունիստական հասարակարգի օրոք էր, և հավատացյալներն Աստծուն փառաբանելու համար գաղտնի էին հավաքվում: Այդ օրը նրանք պիտի հավաքվեին գերեզմանոցում: Ես հրաժարվեցի մասնակցել հավաքույթին, որովհետև ինձ միշտ թվացել էր, թե հավատացյալները խավարամիտ ու հետամնաց մարդիկ են: Բայց երբ հրաժարվեցի, վախը պատեց ինձ. ես մտածեցի, որ եթե չգնամ, Աստված ինձ կպատժի: Այդ ժամանակ ես չգիտեի, որ Աստված սիրող Աստված է, որ Նա Իր

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

միածին Որդուն տվեց, որպեսզի ես հավիտենական կյանք ունենամ (Հովհ. 3.16): Ես Աստծուն չէի ճանաչում և կարծում էի, թե Նա փայտը ձեռքին մի պապիկ է, որը հարմար առիթ է փնտրում, որպեսզի հարվածի մեզ: Մտածում էի, որ Աստված դրված է մեզ ծեծելու, դժբախտացնելու և մեր ունեցածը մեր ձեռքից խլելու համար: Երբ մարդը չի ճանաչում Աստծուն, ամեն հիմար բան էլ մտածում է Նրա մասին, սակայն երբ սկսում ես ճանաչել Նրան, տեսնում ես, որ Նա քո բարի Հայրն է, և Նրա ձեռքին գավազան չէ, այլ Սուրբ Հոգին, որը Նա պատրաստել է քեզ համար, և որ Աստված ծեր չէ, որովհետև երկնքում ծերություն չկա. այնտեղ հավիտենություն է, Նա միշտ երիտասարդ է, մեզ հասկանում է և միշտ մեզ օգնել է ուզում, մի խոսքով՝ Նա հրաշալի ծնող է՝ առանց թերությունների:

Ես մասնակցեցի այդ հավաքույթին: Առաջին տպավորությունը շատ հետաքրքիր էր: Հավաքույթը, ինչպես ասացի, անց էր կացվում գերեզմանոցում, բայց, չնայած դրան, այնտեղ խաղաղ և ուրախ մթնոլորտ էր, ես երջանիկ աչքեր էի տեսնում, որոնց մասին միշտ երագել էի: Լսում էի, թե Աստված ինչ մեծ հրաշքներ է արել նրանց կյանքում:

**8** Հավաքույթը դեռ չսկսված՝ մարդիկ արդեն իրար վկայում էին Աստծո հրաշքները:

Մինչև օրս հիշում եմ մի կնոջ, որը պատմում էր, թե ինչպես է Աստված կերակրում իր տունը, և որ իր «յուղը» երբեք չի վերջանում: Մեկ ուրիշը պատմում էր, թե ինչպես Աստված անցած հավաքության բժշկեց իր ամուսնուն: Որպես վկայություն՝ ծառերից կախված էին կաղ մարդկանց ձեռնափայտերը, նրանք արդեն բժշկվել էին և դրանց կարիքը այլևս չէին զգում: Ես մոռացել էի իմ կյանքի բոլոր դժվարությունները, կարծես վերացել էի աշխարհից: Միշտ վախեցել եմ գերեզմաններից, բայց այդ պահին անգամ չէի էլ զգում, որ գերեզմանոցում եմ գտնվում: Երբ հավաքությամբ սկսվեց, բոլորը միաբան երգեցին «Հայր մեր» աղոթքը. «Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի Քո անունը, Քո արքայությունը թող գա...», և հետո աղոթեցին ու փառաբանեցին Աստծուն: Իմ մարմինը փշաքաղվում էր, երբ քարոզիչները քարոզում էին Աստծո մեծ սիրո մասին: Տեղս չէի գտնում ու չգիտեի, թե ինձ հետ ինչ է կատարվում: Հանկարծ քարոզիչը արտասանեց հետևյալ բառերը. «Եկեք Ինձ մոտ, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և Ես հանգստություն կտամ ձեզ, Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»: Ես չզգացի՝ ինչպես առաջ շարժվեցի և կանգնեցի քարոզչի դիմաց: Աստծուն եկողները այնքան շատ էին, որ նույնիսկ նեղվածք էր, սակայն դա մեզ չէր խանգարում, որ ներողություն խնդրենք 9

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

Աստծուց մեր կատարած ամեն վատ արարքի համար, և հավատացեք, որքան խոստովանում էինք մեր մեղքերը և ներողություն խնդրում, այնքան ավելի էինք թեթևանում: Աղոթքի վերջում ես կարծես մերկացած և թեթևացած լինեի: Հիշում եմ՝ հեկեկում էի՝ չիմանալով, թե ինչու: Հիմա եմ հասկանում, որ ուղղակի Աստված Իր սիրով այցելել էր ինձ: Մինչև ապաշխարելս երբեք լաց չեմ եղել, որովհետև մտածում էի, որ ես տղամարդ եմ և չպիտի արտասվեմ: Իմ սիրտը քարացել էր, բայց այստեղ քար սիրտը փշրվեց, և մի մսեղեն սիրտ տրվեց ինձ, որը արտասվում և նույնիսկ հեկեկում էր իր Ստեղծողի առաջ և փառք տալիս Նրան:

Մինչ ես արտասվում էի, մի երիտասարդ կին կողքիս կանգնած աղոթում էր Սուրբ Հոգով, այսինքն՝ այլ լեզուներով: Ավետարանում ասվում է, որ Հիսուսն աշակերտներին խոստանում է Իր գնալուց հետո Սուրբ Հոգին ուղարկել և պատվիրում է սպասել Նրան: Այնուհետև, Գործք առաքելոցի երկրորդ գլխում նկարագրվում է, թե ինչպես առաքյալները, վերնատանը նստած, սպասում էին Սուրբ Հոգուն, և հանկարծ երևացին

10 կրակե լեզուներ ու իջան նրանց վրա: Բացի առաքյալներից, այնտեղ էլի մարդիկ կային: Վերնատանը գտնվողներից յուրաքանչյուրը խոսում էր այլևայլ լեզուներով:

Դա նշան էր, որ նրանք մկրտվել էին Սուրբ Հոգով:

Ես այդ ամենի մասին ոչինչ չգիտեի, սակայն կողքիս կանգնած կնոջ աղոթքը շատ հաճելի էր ինձ: Եվ ես դիմեցի Աստծուն ու ասացի. «Հայր, եթե դա Քեզանից է, և Դու, իրոք, գոյություն ունես, մկրտիր ինձ, որպեսզի ես էլ այդպես աղոթեմ»: Աստծո Խոսքն ասում է. **«Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարզևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, ովքեր խնդրում են Իրենից»** (Դուկ. 11.13): Եվ, իրոք, Հայրը ինձ քար չտվեց, այլ տվեց Իր Սուրբ Հոգին, և ես լցվեցի զորությամբ և երջանկությամբ, սկսեցի խոսել այլ լեզուներով, ես անբարբառ հնչյուններ էի արտասանում:

Եվ այդ օրվանից ես ծառայում եմ Աստծուն՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Ես երջանիկ եմ. Աստված տալիս է ամեն բան, որ իմ ուրախությունը կատարյալ լինի: Նա սիրում է ինձ, և ես՝ Նրան, ես կատարում եմ Նրա կամքը, և Նա կատարում է իմ կամքը, և, ամենակարևորը, իմ անունը գրված է Կյանքի գրքում: Ես հասկացա, որ ծնվել եմ ոչ թե մեռնելու, այլ ապրելու և հաղթելու համար, որպեսզի քանդեմ սատանայի արքայությունը և կառուցեմ Աստծո արքայությունը: Այս կարճ կյանքում ես գտել եմ **11**

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

իմ կոչումը և տեղը: Շատ կարևոր է, որ դու էլ գտնես, և շատ հարցեր, կարևոր հարցեր կլուծվեն քո կյանքում: Այսօր Աստված նորից կանչում է մեզ և ասում՝ եկեք Ինձ: Ես իմ կյանքում միշտ վերապրում եմ այդ պատվիրանը, այդ կանչը: Գիտեք, երբ գալիս եմք Աստծուն, ապաշխարում և մաքրվում Հիսուս Քրիստոսի արյամբ, մտածում եմք, որ այդ պատվիրանն էլ չի գործում, որովհետև մենք արդեն գտնվում եմք Նրա ձեռքերի մեջ: Բայց այսօր սատանան քնած չէ, նա ման է գալիս, որպեսզի մեզ կուլ տա. **«Արթուն եղեք, հսկում արեք, որովհետև ձեր հակառակորդը՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է՝ որին կուլ տա»** (Ա Պետր. 5.8): Այսօր աշխարհում այնքան խոչընդոտներ կան, որոնք քեզ ուզում են կուլ տալ, օրինակ՝ աղքատությունը, անհաջողությունը: Շատ երիտասարդ աղջիկներ և պատանիներ այսօր երիտասարդական ցանկությունների գերի են, և այդ ցանկությունները ուզում են նրանց կուլ տալ: Շատերը մտածում են միայն ամուսնության մասին, և նրանց հասկացողությամբ՝ երջանկությունը ամուսնության մեջ է: Ես ուզում եմ քեզ ասել, իմ երիտասարդ բարեկամ, որ երջանկությունը ոչ փողի, ոչ կերակուրի, ոչ հագուստի, ոչ գեղեցկության և ոչ էլ ամուսնության մեջ է: Մեր Տեր

**12** Հիսուս Քրիստոսի մեջ է այսօր քո երջանկությունը: **«Փնտրեք երկնքի արքայությունը**

և Նրա արդարությունը, մնացած ամեն բան կտրվի ձեզ» (Մատթ. 6.33): Այսօր Աստված ուզում է, որ մենք ամեն բան և ցանկացած հարցով Իր մոտ գնանք: Եթե աշխարհի հոգսը կանչում է քեզ, իմացիր, որ Հիսուսն ավելի շուտ է քեզ կանչել: Մի՛ վազիր դեպի հոգսը և մի՛ խորասուզվիր նրա մեջ, այլ վազի՛ր դեպի Հիսուսը: Եթե ընտանիքում քեզ համար դժվար է, գնա Հիսուսի մոտ. Նա ամեն բան կանչում է քեզ. «Եկ Ինձ մոտ ամեն օր, ամեն ժամ, ամեն բան, ամեն վայրկյան»:

Հաճախ մենք՝ հավատացյալներս, ավելի շատ սատանայի մոտ ենք գնում, քան Հիսուսի: Դու կարող ես հաշվել, թե օրվա մեջ քանի ժամ, բայց կամ վայրկյան ես մտածում Հիսուսի մասին, Նրա գործի և Նրա Խոսքի մասին և որքան ժամանակ ես նվիրում սատանայի հետ բամբասելուն: Նա միշտ քեզ սխալ մտքեր է տալիս, և եթե դու սկսում ես մտածել դրանց մասին, անհանգստանում, ապա ինքնըստինքյան ընկնում ես սատանայի պատրաստած թակարդը: Այս ամենից հետո գալիս է վախը, իսկ վերջում հայտնաբերում ես, որ ամենադժբախտ և անհաջողակ մարդն ես, որովհետև լսեցիր նրա չարախոսությունը: Հիշի՛ր, ինչից որ պարտվես, նրան էլ ծառա կլինես (Հովհ. 8.34): Սատանան ուզում է, որ դու մտքով պարտվես: Եվ եթե դու մտքով պարտվեցիր և **13**

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

հավատացիր նրա ստին, դու արդեն ընկար նրա թակարդը և դարձար քո իսկ մտքերի ծառան: Անմիջապես գնա Հիսուսի մոտ՝ ազատագրվելու մտքերիցդ:

Մի օր ինձ կանչեցին քաղցկեղից տառապող մի հիվանդի համար աղոթելու: Հանկարծ ինձ մի պատկեր երևաց, որ ես հիվանդ եմ քաղցկեղով և մահանում եմ հենց այդ հիվանդությունից: Սատանան սկսել էր չարախոսել և ուզում էր, որ ես հավատամ այդ սուտ մտապատկերին, որովհետև Աստծո խոսքն ասում է. «Եթե սրտով հավատաս և շուրթերով դավանես, կկատարվի»: Ես հասկացա, որ դրա հեղինակը սատանան է, ոչ թե Աստված: Նա ուզում էր, որ ես հանձնվեմ, բայց հենց նույն պահին ես կանգնեցրի ավտոմեքենան և վազեցի դեպի Հիսուսը՝ արտասանելով հետևյալը. «Սատանա, ոչ մի հիվանդություն չի կարող ինձ մոտենալ, որովհետև Հիսուսի արյունով ես գնված եմ ամեն տեսակ անեծքից և բժշկված եմ Նրա վերքերով» (Ես. 53.5): Ես գոռում էի և ասում. «Ես գալիս եմ Քեզ, իմ Հիսուս, ես չեմ գնում այն մտապատկերի ետևից, որն ասում է, թե մեռնելու եմ հիվանդությունից: Ես գալիս եմ Քեզ, և Դու ես ինձ կյանք տվող Աստվածը»:

Ես բարձրաձայն արտասանում էի 91-րդ սաղմոսը. «Բարձրյալի ծածկոցի տակ  
**14** բնակվողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում»:

Իմ մտքերով ես գնացի Հիսուսի մոտ և հակառակ կանգնեցի սատանային, և նա իսկույն փախավ (Հակ. 4.6,7):

Իմ քույր և եղբայր, շատ կարևոր է, որ ամեն թույլ մենք վազենք Հիսուսի մոտ, կատարենք Նրա կամքը, ոչ թե վազենք ու կատարենք սատանայի կամքը:

Եթե նայենք Գործք առաքելոց 7.55-ը, կտեսնենք, որ Ստեփանոսը կանգնած էր մահվան շենին, բայց նա չէր գնում դեպի մահը. նրա հայացքը դեպի երկինք էր ուղղված, և նա տեսնում էր Հիսուսին, որը կանգնած էր Հոր կողքին և սպասում էր իրեն: Իմ բարեկամ, ինչ էլ որ լինի, միշտ վազիր դեպի Հիսուսը: Հիսուսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան ու նույն բառերը քեզ կրկնում է Իր Ավետարանի միջոցով. «Եկեք Ինձ»: Գնա՛ Նրա մոտ, և ամեն բնագավառում Նա քեզ հանգստություն կտա:



ግጥም ላይ ለሚገኙ ግጥሞች ስም ለውጫ

ግጥም 2

Սիրելի՛ բարեկամ, քեզ ուզում եմ հիշեցնել Մատթեոսի Ավետարանի 11.28-30-րդ խոսքերը. «Ինձ մոտ եկեք, ամեն հոգնածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: Ձեր վրա առեք Իմ լուծը և Ինձնից սովորեք, որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք, որովհետև Իմ լուծը քաղցր է, Իմ բեռը՝ թեթև»: «Ձեր վրա առեք Իմ լուծը»: Երբ մենք նայում ենք Սուրբ գիրքը, տեսնում ենք, որ ամեն ժամանակ մեր լուծը վերցնում է Ինքը՝ Հիսուսը: Նա վերցնում է մեր հիվանդությունները, վշտերը, դժբախտությունները, որպեսզի մենք երջանկություն ստանանք:

Մի քանի տարի առաջ ես ներկա էի մի տղամարդու թաղման արարողությանը: Այդ 34-ամյա տղամարդու մահվան պատճառը ալկոհոլն էր: Նրա մայրը աղիողորմ գոռում էր. «Ո՞ւր ես, Աստված, դու չկաս, ինչո՞ւ իմ տղան մահացավ»: Հավաքվածները համաձայն էին նրա հետ, թե Աստված չկա: Թաղումից հետո ինձ մոտեցավ մի պատանի և հարցրեց. «Եթե Աստված կա, ինչո՞ւ նա մահացավ»: Ես բացատրեցի, որ Աստված չի սպանել նրան, այլ ինքն է իրեն սպանել: Սուրբ գիրքն ասում է. «Ձեր մեղքերը ձեզ կգտնեն»: Աստված

2000 տարի առաջ պատվիրան է տվել՝ մի՛ հարբիր: Ես այդ պատանուն բերեցի մի

պարզ օրինակ. երբ դու սովորում ես մեքենա վարել, սկսում ես սովորել նաև երթևեկության կանոնները: Այսօր Աստվածաշունչը մեր կյանքի երթևեկության կանոնների գիրքն է, որը պետք է կարդանք և, ամենակարևորը, պահպանենք, որպեսզի չհանդիպենք վթարի: Իսկ այդ տղան չէր պահել Աստվածաշնչի կանոնները և վթարի էր ենթարկվել: Երկրորդ օրինաց 28-րդ գլխում գրված է, որ եթե գնաս Աստծո ճանապարհներով և Նրա օրենքները պահես, բոլոր օրհնությունները, այսինքն՝ երջանիկ կյանքը, կգան և քեզ կհասնեն, եթե նույնիսկ դու փախչես, նա կհասնի քեզ, միայն թե դու ճանաչիր Աստծուն՝ որպես քո Տեր և Փրկիչ և գնա Նրա ետևից:

Սիրելի՛ բարեկամ, շատ անգամ եմ Աստծո մասին այսպիսի արտահայտություն լսել՝ եթե դու կաս: Ուզում եմ ասել, որ Աստված կա, և Նա կենդանի է, Նա պատասխանում է միայն Իր զավակների աղոթքին, որոնք արդարացած են Հիսուսի արյունով: Աստվածաշունչն ասում է, որ Աստծո աչքերն արդարների վրա են, և Նրա ականջները միայն նրանց աղոթքներին են ունկնդիր: Այսօր Աստված ցանկանում է պահպանել քեզ ամեն տեսակ դժբախտությունից, բայց դու Նրան խանգարում ես՝ չհավատալով Աստծո կարող զորությանը, որ Նա կօգնի քեզ, կբժշկի, կարդարացնի, կմաքրի Հիսուսի արյունով և կտա նոր կյանք՝ լի ամեն բարիքներով: Եսայի 53.1-ում գրված է. «Ո՞վ **19**

հավատաց մեր լուրին, և Տիրոջ բազուկը ո՞ւմ հայտնվեց»: Եթե հավատում ես մեր լուրին, այսինքն, որ Հիսուսն Աստված է և կարող է քեզ տալ հավիտենական կյանք, ապա Նրա բազուկը քեզ կհայտնվի և չի ուշանա, միայն թե դու տեղ տուր Աստծուն քո սրտի մեջ:

Նախկինում եզների վզից լուծ էին կապում, այնուհետև լծից կապում էին բեռը, և եզը քարշ էր տալիս այն: Այսօր աշխարհում կա երկու տեսակ լուծ, դրանցից մեկը Հիսուսի քաղցր լուծն է՝ Ավետարանը, որով մենք պետք է ապրենք, մյուսը սատանայի լուծն է, որը շատ դառն է, դժվար ու ծանր, դրան դու քաջ ծանոթ ես՝ խոչընդոտներ, անհաջողություններ, դժբախտություններ: Կան մարդիկ, որոնք ասում են, թե իրենք ոչ Աստծուն են ծառայում և ոչ էլ սատանային, բայց դա թյուրիմացություն է. եթե մարդ Աստծուն չի ծառայում, մեխանիկորեն ծառայում է սատանային և գտնվում է նրա լծի տակ, որը տանում է դեպի հավիտենական տանջանք, իսկ այս աշխարհում՝ դժբախտ կյանք: Հոգևոր աշխարհում երկու թագավորություն կա՝ Աստծո թագավորությունը և սատանայի թագավորությունը, այդ երկուսն էլ ունեն հոգևոր լուծ և բեռ: Այսօր դու պիտի ընտրես, թե ում թագավորության մեջ ես ցանկանում լինել, որովհետև չես կարող երկու տիրոջ ծառայել. «Ոչ մի ծառա չի կարող երկու տերերի ծառայել, որովհետև կամ

**20** մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կպատվի և մյուսին կարհամարհի, չէք

կարող Աստծուն ծառայել և մամոնային» (Ղուկ. 16.13): Դու չես կարող նաև միջին դիրք գրավել: Հոգևոր աշխարհում միջին ճանապարհ չկա, կա երկու ճանապարհ. մեկը լայն է ու տանում է դժոխք, իսկ մյուսը նեղ է և տանում է դրախտ. **«Նեղ դռնով ներս մտեք, որովհետև լայն է դուռը, և ընդարձակ է ճանապարհը, որ կորուստ է տանում, և շատերն են նրանով գնում: Քանի՜ նեղ է դուռը, և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք, և քիչ են նրան գտնողները»** (Մատթ. 7.13,14): Այնպես որ, եթե Աստծուն չծառայես, ինքնըստինքյան, սկսում ես ծառայել սատանային, և նա քեզ վրա է դնում իր լուծը: Մի քանի ամիս առաջ ես խոսում էի մի մարդու հետ, որը գերված էր ալկոհոլով: Նրա կյանքը կործանված էր, որովհետև նա առանց խմիչքի չէր կարող ապրել, մարդիկ նրանից երես էին թեքել, և նա իր կյանքը փողոցներում էր անցկացնում: Երբ նրան վկայեցի Հիսուսի մասին, նա այդ բոլորը կատակի վերածեց ու պատասխանեց. «Եթե Աստված կա, թող ինձ մի մեծ տակառ օղի տա»: Ես նրան պատմեցի սատանայի մասին, թե ինչպես է դժբախտացնում մարդկանց, և նա ինձ ասաց. «Ա՛խ, եթե այդ սատանային ձեռքս տան, կխեղդեմ»: Այդ ժամանակ ես պատասխանեցի. «Սատանային հեռու ման գալ պետք չէ. նա այստեղ է, և դու արդեն մի քանի տարի է, ինչ լիովին նրա ձեռքերի մեջ ես, նա քեզ արդեն խեղդում է, և քեզ նրանից կարող է ազատել միայն Հիսուսը: Եթե չգաս **21**

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

Հիսուսի մոտ, որ Նա ազատի քեզ, դու շատ շուտով կմահանաս լյարդի ցեռոզից»: Սուրբ գիրքն ասում է. «Մեղքի վարձքը մահն է» (Հռոմ. 6.23): Երբ մարդը մեղքի լծի տակ է, երբեք չի հավատում, որ իր մահվան օրը մոտենում է: Սատանան ամեն օր ծանրացնում է լուծը, մինչև մարդն էլ չի կարողանում տանել այն և կորչում է:

Եթե նկատել եք, հիմա մահացողների համարյա 85 տոկոսը երիտասարդներ են, և մոտավորապես 15 տոկոսը՝ ծերեր, նախկինում այդպես չէր: Ինչո՞ւ են այդպիսի բաներ կատարվում: Ինչո՞ւ են այդքան երիտասարդներ ժամանակից շուտ մահանում: Մահանում են, որովհետև մեղքը գնալով շատանում է: Եվ սատանան, որ գալիս է գողանալու և սպանելու (Հովհ. 10.10), այսօր իր լուծն է դնում այն մարդկանց վրա, ովքեր իրենց կյանքը դեռ չեն տվել Հիսուսին: Շտապի՛ր ազատվել սատանայի լծից: Երբ մարդն իր կյանքը տալիս է Աստծուն, Աստված ազատագրում է նրան ծանր լծից:

Մի անգամ մեր տուն զանգահարեց մի երիտասարդ կին և տխուր ձայնով ասաց.

-Դուք Արթո՞ւրն եք:

-Այո:

-Դա ճի՞շտ է, որ դուք եկեղեցու հովիվ եք:

-Դուք չեք սխալվել:

**22**

Հետո նա ասաց, որ ինձ հետ հանդիպելը անհրաժեշտություն է իր համար: Սրտումս

զգացի, որ հանդիպումը պետք չէր ուշացնել: Պայմանավորվեցինք հանդիպել մեկ ժամից: Երբ հանդիպեցինք, նրա աչքերում մեծ դժբախտություն և տառապանք տեսա: Նա ամեն թույլ կարող էր ինքնասպանություն գործել: Իրեն միայնակ էր զգում, թեպետ ուներ ընկերուհիներ, երեխա, ամուսին: Նա հոգևոր միայնության մեջ էր: Սատանան նրա վրա մեծ լուծ և ծանր բեռ էր դրել: Երիտասարդ կինը այլևս այդ բեռը տանելու ուժ չուներ. ընտանիքն արդեն քայքայվում էր, նա կորցրել էր կյանքի իմաստը, մոլորվել էր և չգիտեր՝ ինչ անի: Ես սկսեցի նրան պատմել Հիսուսի մասին, ասել, որ Նա պատրաստ է Իր վրա վերցնել ողջ ծանրությունը: Հետո պատմեցի, թե որքան լքված ու միայնակ էին իրենց զգում առաքյալները Հիսուսի համբարձվելուց հետո: Բայց հանկարծ Սուրբ Հոգին երկնքից եկավ նրանց մեջ, և միայնության զգացումն անհետացավ: Ես ասացի, որ նրան Հիսուսն է պետք, Աստծո Սուրբ Հոգին է պետք: Նա բացականչեց, որ ուզում է ընդունել Հիսուսին: Մենք ծնկի եկանք և սկսեցինք աղոթել: Նա հեկեկում էր ու բացականչում. «Հիսու՛ս, ներիր իմ մեղքերը, փրկիր ինձ, օգնիր ինձ, ես այլևս չեմ կարող տանել այն բեռը, որ ինձ վրա է»:

Երկար աղոթքից հետո ես բացեցի աչքերս և նայեցի նրա դեմքին: Այն ողողված էր արցունքներով, իսկ աչքերում պարզություն կար: Խաղաղություն էր իջել նրա վրա, նա այն կինը չէր, որին տեսել էի մի քանի թույլ առաջ: Հիսուսն այդ թույլների ընթացքում վերցրել էր նրա ծանր լուծը, և նա իրեն շատ երջանիկ էր զգում: Որոշ ժամանակ անց ես

իմացա, որ կարգավորվել են նրա և ամուսնու հարաբերությունները, և նրանք միասին եկեղեցի են հաճախում: Երբ նորից հանդիպեցինք, ասաց, որ ինքը աշխարհի ամենաերջանիկ մարդն է, և իր ընտանիքը ամենալավ ընտանիքն է: Ամենակարևորն այն է, որ նա սկսել էր հոգևոր աշխատանք կատարել, աղոթում էր ուրիշների համար: Այո, Հիսուսը վերցրել էր նրա լուծը և ծանր բեռը, իսկ ինքը վերցրել էր Հիսուսի լուծը, նա հոգևոր աշխատանք էր կատարում և երջանիկ էր Հիսուսի հետ: Իմ սիրելի՛ բարեկամ, երբ դու կյանքդ հանձնում ես Հիսուսին, Նա վերցնում է քո ծանր լուծը: Ժամանակն է, որ դու էլ վերցնես Հիսուսի քաղցր լուծը: Շատ անգամ ես տեսնում եմ մարդկանց, ովքեր իրենց կյանքը տալիս են Աստծուն և սկսում են ապրել Աստծո հետ, բայց մի քանի ամիս կամ տարի հետո հեռանում են Աստծուց և գնում աշխարհ՝ դեպի մեղավոր կյանքը: Պատճառն այն է, որ այդ մարդիկ իրենց վրա չեն վերցնում Հիսուսի լուծը, այսինքն՝ եկեղեցում ոչ մի աշխատանք չեն կատարում մարդկանց փրկության համար: Հիսուսն Ինքն ասաց. «**Երբ պիղծ ոգին դուրս է գալիս մարդու միջից, անջուր տեղերում ման է գալիս հանգիստ խնդրելով և չի գտնում: Այն ժամանակ ասում է՝ ետ դառնամ իմ տունը, որտեղից դուրս եկա: Եվ գալիս է, այն գտնում պարապ, սրբված և հարդարված: Այն ժամանակ գնում**

**24** է, իրենից ավելի չար յոթը ուրիշ ոգիներ է առնում իր հետ և մտնում բնակվում

այնտեղ» (Մատթ. 12.43-45): Իմ սիրելի՛ բարեկամ, սատանան կարող է վերադառնալ քեզ մոտ, եթե անգործ ես և քեզ վրա չես վերցրել որևէ լուծ եկեղեցում, որևէ պատասխանատվություն: Եկեղեցում կան մարդիկ, ովքեր ոչինչ չեն ուզում անել, նրանք միայն դիտում են ուրիշների կատարածը և քննադատում նրանց: Իմ բարեկամ, մի եղիր այդպիսին, այլ փորձիր օգնել, ազատվիր ամեն տեսակ բարդույթներից, աղոթիր եկեղեցու հոգսերի համար, այն ժամանակ դու ընդհանրապես պարապ չես մնա: Փորձիր մոտենալ քո ավագին և ասել. «Ինձ ծառայություն տվեք եկեղեցում, ես ուզում եմ իմ ժամերը նվիրել Աստծուն, ուզում եմ աշխատել Նրա համար: Ես չեմ ուզում անգործ մնալ»: Եվ քեզ վրա վերցրու Հիսուսի լուծը, երբեք պարապ մի՛ մնա, որովհետև այսօր սատանան փնտրում է հոգևոր անգործ մարդկանց: Ես ճանաչում եմ մարդկանց, ովքեր եկեղեցում մեծ աշխատանք են կատարել, նրանք գիտեն ինչպես վերցնել Հիսուսի քաղցր լուծը և ինչպես տանել այն: Բայց այսօր նրանք Աստծո հետ չեն, նրանք հեռացել են և ընտրել աշխարհը: Ինչո՞ւ: Պատճառը մեկն է. նրանց կյանքում եկել է մի օր, երբ նրանք հրաժարվել են Հիսուսի լծից և պարապ են մնացել: Այդ պարապության մեջ նրանք թուլացել են, և իրենց թշնամին՝ սատանան, պարապ գտնելով նրանց, կուլ է տվել (Ա Պետր. 5.8): Իմ սիրելի՛ բարեկամ, եթե դու մաքրված ես Հիսուսի արյունով, Նրա Խոսքը կարդում և

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

կատարում ես, և պարապ չես, որը շատ կարևոր է, այլ Աստծո արքայության համար ինչ-որ մի աշխատանք ես կատարում, որպեսզի Ավետարանը տարածվի, և մարդիկ փրկվեն, դառնան երջանիկ, ուրեմն դու վերցրել ես Հիսուսի լուծը: Եթե շարունակես այդպես ապրել և չձանձրանալ, սատանան երբեք էլ չի վերադառնա քո կյանքը: Իսկ եթե դու այսօր ոչ մի բան չես անում Հիսուսի համար (ուղղակի քննիր քո կյանքը), շտապիր, ոչ մի ժամ մի՛ կորցրու, գնա՛, քեզ համար մի գործ գտիր, որը դու կարող ես անել, և արա՛: Աստված թող օրհնի քո որոշումը:

Նայում էի մեր տան պատշգամբից: Բակում հերթ կանգնած կարիքավորները նավթ էին ստանում որպես օգնություն: Ես հերթի մեջ կանգնած հոգնած ու բեռնավորված մարդկանց տեսա: Այնքան էի ուզում ուղղակի գոռալ. «Եկե՛ք Հիսուսին, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և ձեզ վրա վերցրեք Հիսուսի լուծը, որովհետև այն քաղցր է ու թեթև»:

ከ ሌ ዓ ሌ ከ ዓ

ሀ ስ ህ ስ ሶ ሮ ቶ

ቆጠባ 3

Սիրելի բարեկամ, նորից վերադառնանք Մատթեոսի Ավետարանի 11.8-30-րդ խոսքերին. «Ինձ մոտ եկեք, ամեն հոգնածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: Ձեր վրա առեք Իմ լուծը և Ինձնից սովորեք, որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք, որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»։ Այս խոսքի երրորդ պատվիրանն է. «Ինձնից սովորեք»։

«Մեկն է ձեր ուսուցիչը՝ Քրիստոսը», իսկ մենք բոլորս Նրա աշակերտներն ենք (Մատթ. 23.8)։ Այսօր մենք պետք է սովորենք Հիսուսից, որովհետև Նա է միակ ճշմարիտ Ուսուցիչը, որը երբեք չի սխալվում։ Դու կարող ես վստահել Նրան, որովհետև Նրա ուսմունքը (Ավետարանը) ոչ թե երկրային է, այսինքն՝ մարդկային, այլ երկնային, այսինքն՝ աստվածային։ Աստված երբեք չի սխալվում։ Մեր օրերում կարելի է տեսնել աշխարհի շատ ուսուցիչների, ովքեր մարդկանց սովորեցնում են ինչպես ապրել կամ իրենց ինչպես դրսևորել։ Եվ նրանք ամեն տարի կարող են փոխել իրենց մտածելակերպը։ Այն ուսուցիչը, որը տարիներ առաջ սովորեցնում էր ինչպես հասնել կոմունիզմին և ապացուցում էր, որ մարդը առաջացել է կապիկից, և որ մեր նախահայրերը կապիկներ են եղել, այսօր սովորեցնում է, թե ինչպես կարելի է հասնել կապիտալիզմին, սովորեցնում է, որ կապիտալիզմն է կատարյալ ճանապարհը, և ապացուցում, որ մարդուն ստեղծել են

այլնուորակայինները, որ մեր նախահայրերը, հավանական է, կանաչ գույնի են եղել, առանց քթի և ականջների: Ես չգիտեմ, թե մի քանի տարի հետո նրանք ինչ նոր գաղափարի կհանգեն և նոր սերնդին ինչեր կսովորեցնեն, բայց Հիսուսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան (Եբր. 13.8), և Նա ամեն տարի չի փոխում Իր գաղափարները: Ինչ Նա ասում էր 2000 տարի առաջ, նույն խոսքերն ասում է նաև այսօր, և դրանք չեն կորցրել իրենց ուժը: Մենք այս գրքույկում կարդացինք, որ գոյություն ունի երկու ճանապարհ. մեկը լայն ճանապարհն է, որը տանում է դեպի կորուստ և դժոխք, մյուսը՝ նեղը, որը տանում է Աստծուն: Եվ այս երկու ճանապարհներն ունեն իրենց ուսմունքները և իրենց ուսուցիչները: Սատանան, որը ստի հայրն է, այսօր շատ գրքեր և ուսմունքներ ունի և այսօր այդ ուսմունքները սովորեցնում է հենց իրենց՝ մարդկանց միջոցով: Ինչպես Աստված, այնպես էլ սատանան, այսօր ուզում են օգտագործել մարդուն և նրա հնարավորությունը: Աստված ուզում է մարդուն օգտագործել բարի գործերի համար, որպեսզի ուրիշները այդ մարդու միջոցով երջանկանան, փրկվեն և ունենան հավիտենական կյանք: Սատանան էլ այսօր ունի իր նպատակը, և այդ նպատակը նույնպես իրականացնում է մարդու միջոցով: Նրա նպատակներից մեկը մարդկության ոչնչացումն է. սատանան չի սիրում մարդկանց, անգամ այն

## ԵԿԵՔ ԻՆՁ ...

---

մարդկանց, ովքեր իրեն շատ են օգնում, որովհետև մարդը ստեղծված է Աստծո պատկերով (Ծննդ. 1.26): Սատանան տանել չի կարող Աստծո պատկերը, ուստի և կործանում է մարդկանց ու տանում է դժոխք և հավիտենական կորուստ, իսկ շատերն այսօր ուղղակի մասնակից են լինում սատանայի չար գործերին՝ մտածելով, թե լավ բան են անում: Ուրիշներին դժբախտացնում են ու մտածում, թե մահից հետո մեծ վարձք կստանան, որ սատանան իրենց բարձր պաշտոն կտա դժոխքում:

Իմ բարեկամ, Սուրբ գրքում գրված է, որ սատանան ստի հայրն է (Հովհ. 8.44), և դժոխքում ոչ մի պաշտոն չկա, այնտեղ տանջանք, տառապանք և ատամների կրճտոց է, կա հավիտենական կրակ, որն անվերջ այրում է: Վերջերս հեռուստացույցով սատանայապաշտ մի կնոջ էին ցուցադրում (սատանայապաշտները սատանայի ուսմունքները տարածողներն են, Հայաստանում նույնպես կան այդպիսիք): Այդ կինը ղեկավարում էր աշխարհի գրեթե բոլոր կախարդներին, աստղագուշակներին և սատանայապաշտներին: Նա ասում էր, որ իրենք աշխատում են, որ չարն ավելի շատ լինի, քան բարին, նրանք ուզում են բարին ընդհանրապես վերացնել աշխարհից և ցանկանում են, որ աշխարհը չարով լցված լինի, այսինքն՝ սատանայով: **30** այսօր նրանց դա ինչ-որ չափով հաջողվում է, որովհետև մարդկությունը նրանց

ընդունում է, լսում և ուզում է նրանցից ինչ-որ բան սովորել: Հեռուստատեսությունը մեծ հաճույքով ցույց է տալիս նրանց գործերը, ցուցադրում են աստղագուշակներին, որոնք մարդկանց սովորեցնում են ինչպես վարվել տանից դուրս գալիս, կհաջողվի՞ իրենց գործը, թե՞ ոչ: Մարդիկ նրանց հավատում են և ըստ իրենց հավատքի էլ լինում է, որովհետև Սուրբ գրքում գրված է, որ ինչին հավատաս և շուրթերով դավանես, այն էլ կլինի: Այսօր սատանայի ուսուցիչները մարդկանց կորստի են տանում աստղագուշակության, հորոսկոպների, կախարդության, գուշակության, աթեիզմի, կրոնի միջոցով (կրոն ասելով նկատի ունեն նրանց, որոնք չեն դավանում Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն): Մարդկությունն այսօր հոգևոր փնտրտուքի մեջ է. նա ցանկանում է իմանալ իր ապագան:

Մի անգամ Ռուսաստանում մի գնչուհի մոտեցավ ինձ և ասաց. «Երիտասարդ, եկ ես քո ապագան գուշակեն, ասեն, թե քեզ ինչ է սպասվում»: Ես նրան պատասխանեցի. «Ուզո՞ւմ ես, ես գուշակեն, թե քեզ ինչ է սպասվում»: Նա շատ զարմացավ, որովհետև չէր սպասում նման պատասխան ստանալ և ժպտալով ասաց. «Ի՞նչ է ինձ սպասվում»: Իսկ ես առանց ժպտալու պատասխանեցի. «Եթե շարունակես գուշակել մարդկանց կյանքը և տարածել սատանայի սուտը, դժոխք կգնաս»: Մարդն այսօր չի գիտակցում, թե

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

որքան վտանգավոր բան է անում, երբ գնում է գուշակի, աստղագուշակի կամ էլ կախարդությամբ զբաղվողի մոտ՝ հոգևոր բան սովորելու: Դրա վերջը դեպրեսիան է, մահը, ինքնասպանությունը և հավիտենական կորուստը: Բայց Հիսուսն ասաց. **«Ինձնից սովորեք ամեն բան»**: Նա դեռ հազարավոր տարիներ առաջ է ասել, որ եթե գաս Աստծո մոտ և պահես Նրա պատվիրանները (Երկր. օր. 28), այն ժամանակ օրհնված կլինես և բոլոր ազգերից ու մարդկանցից ավելի գերազանց կլինես: Ե՛վ քաղաքի մեջ, և՛ աշխատավայրումդ, և՛ տանը օրհնված կլինես (օրհնված, այսինքն՝ երջանկացած, քո նպատակին հասած), օրհնյալ կլինի քո որովայնի պտուղը, քո բոլոր թշնամիները պարտված կլինեն, և դու միշտ հաղթանակ կունենաս, քո տունը միշտ լիքը կլինի սննդամթերքով ու հագուստով, և ինչ էլ որ ձեռնարկես, կստացվի, և, ամենակարևորը, քո անունը գրված կլինի Կյանքի գրքում, որը ոչ ոք չի կարող ջնջել, և եթե մահանաս էլ, միևնույն է, կապրես (Հովհ. 11.25):

Իմ սիրելի բարեկամ, ահա ինչ ապագա դու կարող ես ունենալ, եթե քեզ համար ուսուցիչ ընտրես Հիսուս Քրիստոսին: Այս բաները Իր Խոսքի միջոցով Նա քեզ ավելի շուտ է խոստացել, քան սատանայի բոլոր ուսուցիչները: Աստծո ուսմունքները հաճելի են, **32** մարդուն տալիս են հանգստություն, սեր, երջանկություն: Իսկ սատանայի

ուսմունքները բերում են վախ, ատելություն, դեպրեսիա և դժբախտություն: Այն, ինչ Աստված է ստեղծել, հաճելի է, իսկ ինչ առանց Աստծո ստեղծել է մարդը, հաճելի լինել չի կարող: Ուշադրություն դարձրու, երբ անձրև է գալիս, դու այդ կաթիլների ձայնի տակ ուզում ես հանգստանալ և քնել, բայց երբ խոհանոցում ծորակն է կաթկթում, դու չես կարողանում քնել, ասես գլխիդ ինչ-որ բանով հարվածում են. դրանք նույն կաթոցներն են, բայց ունեն տարբեր հնչյուններ:

Աստծո ստեղծածի մեջ հնչյունները ներդաշնակ են, իսկ այն ինչը Աստծուց չի ստեղծվել, ներդաշնակություն չի պարունակում: Երբ մարդը գնում է մի տեղ իր հանգիստն անցկացնելու, նա չի գնում ինչ-որ ՀԷԿ-ի մոտ, ուր ջուրը խշշալով թափվում է, այլ գետի մոտ է գնում, որովհետև ՀԷԿ-ը կամ ջրմուղը մարդն է ստեղծել և գետի նմանություն տվել, բայց այդ ջրի մեջ չի կարողացել նոտաներ, ներդաշնակություն դնել: Իսկ գետը ստեղծել է Աստված և նրա մեջ դրել իր աստվածային հնչյունները, և այդ նոտաներն են, որ մարդուն կանչում են իրենց մոտ հանգստանալու: Հիսուսն ասաց. **«Ես եմ կյանքի ջուրը, ով որ Ինձնից խմի, երբեք չի ծարավի»** (Հովհ. 4.13,14): Իմ բարեկամ, միշտ գնա այն ջրի մոտ, որտեղ կա կյանք, այսինքն՝ Հիսուսի մոտ, Նրանից սովորիր:



ፎህ ጓፎጋ ፎህ ፎህ ሀቦሰባ ከባህረጋ



ባገብገ 4

Մատթեոսի Ավետարանի 11.29-րդ խոսքում Հիսուսը պատվիրում է Իրենից սովորել, այնուհետև մեկնաբանում է Իր ասածը. «...որովհետև Ես հեզ եմ և սրտով խոնարհ»։ Իմ սիրելի քրիստոնյա՛ բարեկամ, Սուրբ Խոսքը մեզ զգուշացնում է, որ վերջին օրերին շատ մոլորեցնող գայլեր դուրս կգան (Գործք 20.29) և հոտին չեն խնայի։ Աստծո Խոսքը մեզ զգուշացնում է, որ որքան ժամանակը անցնում է, և որքան մոտենում է Հիսուսի գալուստը, այնքան ավելի զգույշ պետք է լինել։ Հոգևոր գայլերի մասին գրված է (Մատթ. 7.15), որ նրանք գալիս են գառների հագուստով, և որ կան մարդիկ, ովքեր մեր միջից են դուրս եկել, բայց երբեք մեզանից չեն եղել (Ա Հովհ. 2.19)։ Այսօր ես ուզում եմ հորդորել Աստծո ժողովրդին՝ զգուշանալ գայլերից։ Ես այս վերջերս առիթ ունեցա շրջելու տարբեր եկեղեցիներում և որտեղ այցելում էի, ամեն տեղ նույն պրոբլեմն էր. ուղղակի գայլը եկել էր և հոգիներ գողացել։ Նրանք մտնում են հոտի մեջ, այսինքն՝ եկեղեցու, լուռ մասնակցում են եկեղեցու հավաքույթներին, նույնիսկ մասնակից են լինում եկեղեցու գործերին, որովհետև նրանք գառնուկի հագուստով են և սպասում են ժամանակին, թե երբ կհանեն գառնուկի հագուստը և կսկսեն այն գործը, որի համար իրենք կանչված են։ Այդպիսի

**36** մարդիկ չեն գնում շնորհքի ետևից, այլ ամեն ժամանակ գնում են գիտելիքների

ետևից և շատ հպարտացած են իրենց գիտելիքներով: Մարդկանց սկսում են սովորեցնել օտար ուսմունքներ, որոնք այդ եկեղեցում երբեք չեն սովորեցրել: Նրանք Աստծո խոսքից իրենց հարմար խոսքեր են մեջբերումներ անում՝ հիմք չվերցնելով Աստվածաշունչն ամբողջությամբ, ընտրում են այն տեղերը, որով կարող են քննադատել եկեղեցուն կամ ծառայողներին: Նրանք միշտ սովորեցնում են հարցական նշանով՝ ինչո՞ւ է այսպես, կամ ինչո՞ւ է այնպես: Ես ուզում եմ, որ դու հիմա կարդաս եբրայեցիներին ուղղված թղթի 13.9-րդ խոսքը. «Կերպ-կերպ օտար ուսմունքներով մի՛ տարվեք, որովհետև լավ է, որ սիրտը շնորհքով հաստատված լինի, ոչ թե կերակուրներով, որոնցով ոչինչ օգուտ չունեցան նրանք, որ այնպես գնացին»:

Նրանք իրենց ուսմունքները կառուցում են քննադատության վրա, որպեսզի ցածրացնեն Հիսուսի սուրբ արյամբ գնված որևէ ծառայողի կամ եկեղեցու: Եվ այն մարդը, որը գերի է դառնում գայլի սուտ փիլիսոփայական ուսմունքին, որի մեջ չկա Աստծո շնորհքը, ներումը, գթությունն ու ուրախությունը, շուտով հեռանում է եկեղեցուց՝ մտածելով, որ այնտեղ ամեն բան սխալ է: Եվ սատանան ուրախանում է, որովհետև նրան, որին Հիսուսը բերել և Իր հանգստության մեջ էր պահում, հաջողվում է դուրս

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

հանել: Այսօր սատանայի նպատակը մեկն է՝ քրիստոնյային հանել եկեղեցուց: Ինչո՞ւ է դա պետք սատանային: 91-րդ սաղմոսի առաջին խոսքում գրված է, որ Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում: Մենք այս խոսքում տեսնում ենք, որ Բարձրյալ Աստված այսօր աշխարհում ունի ծածկոց, որը Նրա եկեղեցին է: Եկեղեցում դու միշտ կարող ես ապահով լինել: Եթե անգամ դժվարությունը մտնի քո տուն, միևնույն է, դու ապահով կլինես:

Մի քանի տարի առաջ ես ճանաչում էի մի երիտասարդ աղջկա, որը շատ երջանիկ էր Հիսուսի հետ, և նրա կյանքն օրեցօր ավելի ու ավելի էր երջանկանում: Բայց օրերից մի օր նրան մոտեցավ մի անձնավորություն, որն ուներ գողացող գայլի հոգի և սկսեց քննադատել եկեղեցու բոլոր ծառայողներին՝ հովվից մինչև գթության ծառայողը: Այս աղջիկը լցվեց ատելությամբ և որոշում կայացրեց հեռանալ եկեղեցուց՝ ասելով, որ կարևոր չէ, որ մարդն անպայման գա եկեղեցի. «Ես կարող եմ տանը նստել, կարդալ, աղոթել և լինել Աստծո հետ»: Նա ոչ ոքի չէր ուզում լսել, որովհետև գայլը գողացել էր նրա հարստությունը՝ սերը դեպի քույրերն ու եղբայրները: Այդ քույրը հեռացավ եկեղեցուց,  
**38** նա դուրս եկավ Բարձրյալի ծածկոցից՝ իր հետ տանելով նաև մի քանիսին: Նրանք

ամեն օր հավաքվում էին, բամբասում՝ նսենացնելով քույրերին և եղբայրներին, անարգելով Բարձրյալի ծածկոցը: Անցել է մի քանի տարի: Նա մի տղայի հետ ունեցած ապօրինի կապից երեխա ունի, կապված է մի հարբեցող երիտասարդի հետ, որը շատ դժվարություններ է «պարզել» իրեն: Ճիշտն ասած, չգիտեմ՝ նա այսօր հնարավորություն ունի՞ աղոթելու և կարդալու: Այդ աղջիկը դուրս եկավ Բարձրյալի ծածկոցից: Արեգակը զարկեց, բայց նրա գլխին ծածկոց չկար, և նա չորացավ ու դարձավ հոգևոր անապատ: Սատանայի նպատակը մեկն է՝ քեզ հանել քո եկեղեցուց: Իմ եղբայր կամ քույր, եթե դու հեռացել ես քո եկեղեցուց, որտեղ քեզ Աստված է կանչել, և հեռացել ես ինչ-որ մեկի դրդմամբ, նշանակում է՝ դու դարձել ես սոված գայլի կերակուր, ուղղակի փախիր նրա ձեռքից, քանի ուշ չէ, և քեզ զցիր Բարձրյալի ծածկոցի տակ. այնտեղ դու հանգիստ կգտնես, հանգիստ, որը կորցրել ես: Խոսքն ասում է. **«Հիշիր, թե որտեղից վայր ընկար»** (Հայտն. 2.5): Եթե հիշեցիր, ապա գնա և այնտեղից էլ սկսիր քո կյանքը Հիսուսի հետ: Ինչպե՞ս կարող ենք ճանաչել գայլերին, որոնցից պետք է զգուշանալ: Դրանք հպարտ մարդիկ են, որոնք չեն ուզում կոտրել իրենց հպարտությունը. նրանք մտածում են, որ իրենք միշտ ճիշտ են: Հիսուսն ասաց. **«Ինձնից սովորեք, որովհետև ես հեզ եմ և**

## Ե Կ Ե Ք Ի Ն Ձ ...

---

սրտով խոնարհ»։ Իմ բարեկամ, սովորիր այն մարդկանցից, ովքեր հեզ և խոնարհ են և ամեն րոպե կարող են ավելի շատ խոնարհվել. այդպիսի մարդկանցից վնաս չկա։ Ես իմ կյանքում մի եզրակացության եմ հանգել. ավելի լավ է հեզ և խոնարհ մարդուց լսել միշտ նույն խոսքերը, այն է՝ Հիսուսը քեզ սիրում է, Նա քեզ պահպանում է, և Նա կգա քո ետևից, քան հպարտ, ինքնասեր, ինքնապաշտ մարդկանցից լսել բազում ուսմունքներ, որոնք չեն շինում քո հոգին, այլ միայն լցնում են քո ուղեղը։ Ուղեղով դու չես կարող Աստծուն հասկանալ (Առակ. 3.5)։ Իմ բարեկամ, ես այսօր ճիշտ ուսմունքներին դեմ չեմ, ես դեմ եմ հպարտությանը, որը զգվելի է Աստծո աչքերին (Առակ. 8.13)։ Աստված այսօր Իր շնորհքի ուսմունքը և Իր համեղ կերակուրն այն մարդկանց է տալիս, ովքեր հեզ են և սրտով խոնարհ։ Հիսուսը հեզ էր և սրտով խոնարհ։ Նրա օծյալները նույնպես հեզ և խոնարհ պետք է լինեն։

Իմ բարեկամ, եղիր հեզ և խոնարհ։ Գնա քո եկեղեցին, գնա այն եկեղեցին, որտեղ քարոզվում է Հայր, Որդի և Սուրբ Հոգի, և ծառայիր, եղիր Բարձրյալի ծածկոցի տակ և նմանվիր Հիսուսին։

**40** Եղիր միշտ արթուն և թույլ մի՛ տուր, որ գայլերը մտնեն քո եկեղեցին և քննադատեն այն։ Եղիր օրհնված քո որոշման մեջ։ Ամեն։

# Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ե

---

Իմ սիրելի՛ բարեկամ, ես պարզապես ուզում եմ, որ դու լինես երջանիկ: Երջանիկ լինելու համար դու միշտ պետք է գնաս Զիսուսի մոտ, քեզ վրա վերցնես Երա բեռը և Երանից սովորես, որովհետև Եա հեզ է և խոնարհ:

Մի խնդրանք ունեմ, այս գրքույկը կարդալուց հետո նայիր սրտիդ և փնտրիր, թե ինչն էր քեզ վերաբերում, քե՛զ գտիր թո սրտի մեջ, ոչ թե ուրիշին: Եվ մի՛ մտածիր, որ այս գրքույկը վերաբերում է այսինչ կամ այնինչ անձնավորություն: Տա Ասված, որ այն քեզ թնայաս չդարձնի: Չարից հեռանալով՝ Ասծուց վախեցիր և թո կյանքում սիրիր Ասծուն, բույրերիդ և եղբայրներիդ: Զիշի՛ր, որ դու թրիսոնյաներին միայն սեր ես պարսական. «Ոչ ոքի ոչինչ պարսական չմնաք, բացի իրար սիրելուց, որովհետև ընկերին սիրողը օրենքը կասարել է» (Զոռն. 13.8): Ասված թող օրհնի քեզ:

Քո եղբայր՝ Արթուր

# ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԸՆԴՈՒՆԵԼ ՆՈՐ ԿՅԱՆՔ

---

Հիսուս Քրիստոսն անհրաժեշտ ամեն բան արել է, որպեսզի դու կարողանաս վերադառնալ Աստուծոյն, հավիտեանական կյանք ստանալ: Եթէ դու ուզում ես ընդունել Հիսուսին և Նրանից փրկութիւն ստանալ, դու կարող ես աղոթել այսպէս.

«Հիսուս, ես գալիս եմ Քո առաջ այնպիսին, ինչպիսին որ կամ: Ես հավատում եմ, որ Դու մահացել ես իմ մեղքերի համար և հարութիւն ես առել մեռելներից, որպեսզի ինձ քո հավիտեանական կյանք: Հիսուս Քրիստոս, եղի՛ր իմ Տերը: Շնորհակալ եմ, որ Դու ինձ հնարավորութիւն սպէցի՛ր Աստուծոյն զավակ լինելու:

Ես հավատում եմ, որ Աստուծանունըն է Աստուծոյն Խոսքը, և սրանից հետո Գրվածքի բոլոր խոսմունքները պատկանում են ինձ»:

Եթե դու աղոթեցիր քո ամբողջ սրտից,  
դու փրկված ես:  
Ասվածաշունչն ասում է, որ դու վերստին  
ծնվեցիր և դարձար նոր արարած:

Բարի գալուստ Ասծո ընթացիք

---

# բովանդակություն

նախաբանի փոխարեւն . . . . .	3
1 ԵԿԵՔ ԻՆՁ ՍՈՏ . . . . .	5
2 ՁԵՐ ՎՐԱ ԱՌԵՔ ԻՄ ԼՈՒԾԸ . . . . .	17
3 ԻՆՁՆԻՑ ՍՈՎՈՐԵՔ . . . . .	27
4 ԵՍ ՉԵՉ ԵՄ ԵՎ ՍՐՏՈՎ ԽՈՆԱՐՅ . . . . .	35
վերջաբան . . . . .	41
դու կարող ես ընդունել նոր կյանք . . . . .	42